

ԳԱՐՁՎԱԾԱՅԻՆ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Խ. Գ. ԲԱԳԻԿՅԱՆ

Բառերի նման դարձվածներն էլ ունեն իրենց արտաքին՝ նյութական կողմը (ձևը) և ներքին՝ բովանդակային կողմը (իմաստը): Ինչպես բառիմաստը, այնպես էլ դարձվածի իմաստը այն հասկացությունն է, որը պատմության ընթացքում հասարակության կողմից ամրակայել է տվյալ բառին, բառակապակցությանը՝ դարձվածին և ինչ-որ բան է նշանակել: Սակայն ի տարբերություն բառի, որն ունի թե՛ իսկական և թե՛ փոխաբերական իմաստ, դարձվածն օժտված է միայն երկրորդ իմաստով՝ փոխաբերությամբ: Առանց փոխաբերության դարձված չկա: Օրինակ, եթե Համո Սահյանը իր «Տարիքն իմ...» բանաստեղծության մեջ վերին հարկեր, թիկունքին կանգնել, ճանապարհ հարթել, տիպոգրներով զբաղապատել, բերանը փակել, ձեռքեր կապել, ձեռքը հավաքել, առուփայտի ոլորտները մտնել, ժանգն ու մուրք լույսի տեղ ծախել բառակապակցությունները փոխաբերաբար՝ դարձվածային իմաստներով, չգործածեր, նրա բանաստեղծությունը իմաստազուրկ կլիներ: Ահա դրանից մի հատված.

... Թող ինձ ներքն հարկերը վերին...
Հարկերը վերին... Որ վերցնում հաճախ
Նշանակում են հիմարին՝ հանճար,
Կանգնում թիկունքին, ճանապարհ հարթում
Եվ տիպոգրներով զբաղապատում,
Որ հանճարների բերանը փակի,
Ձեռքերը կապի, ձեռքը հավաքի...
Եվ հետո դառնա և առանց վախի
Մտնի ոլորտներն այս առուծախի,
Իր ժանգն ու մուրք լույսի տեղ ծախի...
... Այդ նույն վերին հարկերը՝ իրենց հաջողությունից՝
Եթե նույն պարելով, ստիպում են, որ սուրբը երդվի լրքի արևով
Եվ նրա առաջ իր վիզը ծռի
Ու մաքրի նրա կոշիկները՝ ձրի...

Ընդոտ է, դարձվածների մի մասը ծագել է բառերի ու բառակապակցությունների սովորական իմաստներից, ինչպես՝ աբիլլեսյան գառչապառ, առաջին շուքակ, շինական պարիսպ, խոփը ֆարին առնել և այլն (սրանք և սրանց նմանները իրենց իսկական իմաստներով էլ են գործածվում), բայց հետագայում, վերաիմաստավորվելով, բոլորովին այլ իմաստներ են ստացել:

Որոշ դարձվածների մեջ էլ ինչ-որ նմանություն կա փոխաբերության հիմքում ընկած առարկաների, հատկանիշների ու երևույթների միջև, ինչպես՝ առջի ծառայություն մատուցել, երկու ֆարի (կրակի) առանձնում մնալ, առյուծի քաժին, կրակի գին, կրիայի ֆայլերով և այլն: Համեմատաբար ավելի շատ են այն դարձվածները, որոնք իմաստային ոչ մի կապ չունեն ինչպես

իրենց բաղադրիչների, այնպես էլ այդ բաղադրիչների գումարից առաջացած իմաստների հետ (ձուլը ծառը հանել, փոթորիկ մի քաժակ ջրում, գլուխը կտրցնել, քամի ցանողը փոթորիկ կենձի...): Մրանք և ընդհանրապես բոլոր դարձվածային միավորները՝ ԴՄ-ները, ժողովրդական մտածողության, նրա վառ երևակայության, նրա մտքի թռիչքի պատկերավոր արտահայտություններն են, որոնք համագործածական արժեք ստանալով, անցել են սերնդից սերունդ և դարձել ազգի սեփականությունը: Տեղիչն է նշել, որ ԴՄ-ները նաև ազգային լեզվամտածողության արգասիք են: Այժմ էլ ժողովուրդը իր պատկերավոր լեզվամտածողության և վառ երևակայության շնորհիվ շարունակում է ստեղծել նոր ԴՄ-ներ՝ ելնելով հասարակական-քաղաքական կյանքի փոփոխություններից, գիտության ու տեխնիկայի զարգացման առաջընթացից և ընդհանրապես կյանքի բոլոր տեղաշարժերից¹:

Ինչպես բառերը, այնպես էլ ԴՄ-ները լինում են մենիմաստ և բազմիմաստ, բառերի նման դարձվածներն էլ իրենց ստեղծման ժամանակ, անշուշտ, մենիմաստ են եղել և հետո միայն՝ կապված նրանց տարածման աշխարհագրության, ոճերի տարբերակման և այլևայլ հանգամանքների հետ, ստացել են նաև հավելյալ իմաստներ, կամ միևնույն առարկան, վերաբերմունքը, հատկանիշը, երևույթը բնութագրելու համար նույն ժողովրդի տարբեր հատվածներում կամ տարբեր ժողովուրդների մոտ ստեղծվել են համանման կամ նույնիմաստ ԴՄ-ներ. այդ ճանապարհով են առաջանում դարձվածների բազմիմաստությունն ու հոմանիշությունը: Այսպես, օրինակ՝ ձախ գնալ դարձվածը Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի կազմած «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» (1975 թ.) բերվում է մեկ իմաստով՝ «առաջադրության մատնվել, ձախողվել (Ինչ գործ որ բռնում է, ձախ է գնում)»։ վերջին 15—20 տարում այն նոր իմաստներ է ձեռք բերել և դարձել է բազմիմաստ. նրա ձեռք բերած երկու նոր իմաստներն էլ մեծ հաճախականություն ունեն և հանդես են գալիս խոսքի տարբեր ոճերում:

1. Ապրանքը կամ որևէ բան ոչ իր իսկական նպատակին ծառայել, կոզմենակի ճանապարհով վաճառվել, յուրացվել. «Ստուգումներից պարզվեց, որ պահեստի իտալական կաշվից 5625 դոլար է գնացել» (ՍՀ): «Պարզվեց, որ մշակույթի տան վերանորոգման համար ստացված շինանյութերից շատ բան ձախ է գնացել, և ոչ ոք դրա համար պատասխան չի տվել» (ԾԾ):

2. Հնտանիքին դավաճանել, անօրինական կյանք վարել, սիրեկան պահել. «Եսթերը գիտեր, որ ամուսինը ձախ է գնում, բայց ձեռքին ի՞նչ կար, ի՞նչ կարող էր անել» (Գար.): «Չարիք չէ՞ արդյոք, որ օրինական ընտանիք ունեցող կանայք էլ են հաճախ ձախ գնում» (ՀՍ):

Նույն իմաստով այս դարձվածը գործածվում է նաև կատարաբան ոճերում. «— Այ կնիկ, այսօր ձախ չգնաս, տունը մարդ է գալու» (Ոգնի):

Նույն բառարանում գլխին կապել դարձվածը վկայակոչված է երկու իմաստով՝ 1. զանազան միջոցներով մեկին մի բան տալ, պարտադրել, վաճառել, 2. աղջկան ամուսնացնել ավելի բարձր արժանիքներ ունեցող փեսացուի հետ:

Ակադեմիկոս էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (1976, հ. 1, էջ՝ 246) այդ նույն դարձվածի համար բերված է չորս հոմանիշային իմաստ՝ 1. խորամանկությամբ՝ խաբեությամբ մեկին մի բան ընդունել տալ, վզին փաթաթել, 2. տանը մնացած աղջկան մեկին կնության տալ, 3. ընդհանրապես ամուսնացնել, 4. հոմանուհու հետ կենակցել:

¹ Տե՛ս Խ. Գ. Բաղիկյան, Դարձվածային նորարարություններ, Բանբեր Երևանի համալսարանի, 1992, № 1, Խ. Գ. Բաղիկյան, Պոտենցիալ, դիպլոմային և Ռեդիակային գաղափարային միավորներ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, № 1:

Ինչպես երևում է բերված օրինակներից, դարձվածային բազմիմաստությունը սերտորեն կապված է դարձվածային հոմանիշության հետ: Ճիշտ է, այս դեպքում դրանք արտաքին կողմով՝ ձևով նույնն են, բայց բովանդակության պլանում տարբերվում են:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ճիշտ չէ այն կարծիքը, թե իբր բազմիմաստ դարձվածները սակավաթիվ են, և նրանց իմաստները շեն անցնում 3—4-ից: Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ միայն արեւելահայերենում բազմիմաստ դարձվածների թիվը անցնում է հազարի սահմանը, որոնց թվում քիչ չեն այնպիսի ԴՄ-ները, որոնք ունեն ութից-տասը, նույնիսկ տասից-տասներկու իմաստներ: Հոդվածում ժամանակակից մամուլից, գեղարվեստական գրականությունից և առօրյա խոսակցական ոճերից բերվում են բազմիմաստ ԴՄ-ներ՝ իրենց իմաստային բազմազանություններով ու կիրառությունների ոլորտներով:

Դարձվածային բազմիմաստությունը սերտորեն կապված է դարձվածային համանունության (նույնանունության), հոմանիշության, հակահիշության հետ, ինչպես նաև առնչվում է առկայացման քերականական կաթգին. դրանց թնությունը կանգարդառնանք ստորև:

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ: Դարձվածային բազմիմաստությունը ամենից առաջ կապված է դարձվածային համանունության հետ: Ժամանակակից հայերենի դարձվածային միավորների համակարգում բավական գործուն են համաճեղմ ԴՄ-ները, որոնք գրությամբ և արտասանությամբ բացարձակապես նույնն են, բայց իմաստով՝ տարբեր, երբեմն էլ՝ հակադիր: Համանուն ԴՄ-ները բազմիմաստ ԴՄ-ների համակարգում մի առանձին խումբ են կազմում, որի ուսումնասիրումը շատ կարևոր ու հետաքրքրական է հատկապես ոճական առումով:

Ինչպես ամեն մի դարձված, այնպես էլ համանունները, որպես լեզվի իմաստակիր միավորներ, հավասարապես հանդես են գալիս նրա թե՛ բառական և թե՛ ձևաբանական ու շարահյուսական մակարդակներում: Ճիշտ են նշում լեզվաբանները, որ համանունությունը լեզվի արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունները բացահայտող լեզվական երևույթներից է: Սա նշանակում է, որ համանուն դարձվածի, ինչպես ամեն մի դարձվածի համար վճռորոշ նշանակություն ունի խոսքային միջավայրը, որովհետև միևնույն բառակապակցությունը խոսքային մի միջավայրում հանդես է գալիս իր իսկական՝ բուն իմաստով ու նշանակությամբ, իսկ մեկ այլ խոսքային միջավայրում վերաիմաստավորվում և ձեռք է բերում դարձվածային իմաստ. այսինքն՝ միևնույն բառակապակցությունը տարբեր խոսքաշարերում արտահայտության պլանում նույնն է, բովանդակության պլանում՝ տարբեր: Մեկ օրինակն էլ բավական է ասածն ապացուցելու համար: Ահա սեփական ռուբերի վրա կանգնել բառակապակցության երկու տարբեր կիրառություններ տարբեր խոսքաշարերում՝ բոլորովին տարբեր իմաստներով՝ մի դեպքում՝ իսկական (սովորական), մյուս դեպքում՝ դարձվածային:

1) Պատու Հայզենը մի անգամ երթևեկում էր տրամվայով: Մի երիտասարդ կանգնեց նրա ոտքին: Մեծ գրողը ոտքը շքաշեց, այլ նրա մեջքին թեթևակի խփելով հարցրեց.

— Ասացեք, երիտասարդ, քանի՞ տարեկան եք: Երիտասարդը ուշադիր նայեց բանաստեղծին ու պատասխանեց.

— Քսան: Հայզենը ծիծաղեց ու ասաց.

— Կարծեմ այդ տարիքում կարող եք սեփական ռուբերի վրա կանգնել (Գարուն):

ձ) Մեծ էր Հանեսի ընտանիքը. երեք տղա և երկու աղջիկ: Նրա ավագ որդին վաղուց էր շափահաս դարձել, բայց չէր աշխատում. պարապ-սարապ թափառում էր: Մի օր էլ հայրը կանչեց նրան ու ասաց.

— Տղաս, ժամանակն է, որ քո հացը ինքդ վաստակես, դու արդեն այն տարիքում ես, որ կարող ես սեփական ոտքերի վրա կանգնել, գնա քեզ համար քաղաքում աշխատանք ճարիր, ամուսնացիր և ինքնուրույն կյանքով ապրիր, իսկ ես դեռ փոքր եղբայրներիդ ու քույրերիդ պիտի ոտքի կանգնեցնեմ (ՀԺՀ):

Բացի ուղիղ և փոխաբերական իմաստներից համանուն կայուն բառակապակցությունները որպես դարձված հանդես գալու դեպքում էլ տարբեր խոսքաշարերում տարբեր իմաստներ են ունենում: Միևնույն կազմությունն ու ձևավորվածությունն ունեցող ԴՄ-ները մի դեպքում, մի խոսքաշարում իրար մոտիկ, այսինքն՝ հոմանիշային իմաստներ են: արտահայտում, իսկ մեկ այլ խոսքաշարում՝ իրար բոլորովին հակադիր, այսինքն՝ հականիշներ են:

ՀՈՄԱՆԻՇԱՅԻՆ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ: Համանուն ԴՄ-ների ճնշող մեծամասնությունը, բազմիմաստաբար հանդես գալու դեպքում, թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքում հիմնականում հոմանիշային կիրառություն ունի²:

Հայերենի մոտ երեսուն հազարի հասնող դարձվածային հարուստ համակարգում փոքր թիվ չեն կազմում առաջին հայացքից այնքան էլ աչքի չընկնող համանուն ԴՄ-ները. մեր հաշվումներով այժմ հայերենում բավական ակտիվ գործածություն ունեն հինգ հարյուրից ավելի համանուն ԴՄ-ներ, որոնց մի մասն էլ հոմանիշային կիրառություն ունի: Այսպես՝ Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի կազմած «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանում» աչքը բաց անել ԴՄ-ն ունի 11 ոճաիմաստային հոմանիշային կիրառություն: Ահա դրանք՝

1. Քնից արթնանալ, զարթնել: «Երբ աչքս բաց արի, արևը ծագել էր» (ԳԹ):

2. Ուշքի գալ, սթափվել: «Մինչև Եսթերը աչքը կբացեր, ամուսինը արդեն դուրս էր թռել» (Գար.):

3. Մնվել, ծնունդ առնել: «Ահա այս Մասիսի շուրջն է աչքը բաց արել ժողովուրդը, նրանով է կրթվել, նրանից է սովորել հավերժությունը» (ԴԴ):

4. Գիտակցության գալ, շարն ու բարին հասկանալ, կյանքը ճանաչել, կյանք մտնել: «Նոր էինք սկսել աչք բաց անել, երբ վրա հասավ պատերազմը» (ՍԳ):

5. Գլխի գցել, հասկացնել, խելամուտ դարձնել: «Իմաստուն ժերունին բացեց տղայի աչքերը և նրան ցույց տվեց ճիշտ ապրելու ճանապարհը» (ՀԺՀ):

6. Զգաստանալ, աշալուրջ լինել, ուշադիր լինել, խելքը գլուխը հավաքել: «Տղա ջան, մի աչքերդ բաց արա, տես ինչ ես անում, խելքդ գլուխդ հավաքիր»:

7. Մագել, դուրս գալ: «Արևը դեռ նոր էր աչքը բացել» (Ավ. Իս.):

8. Հայտնվել, իրեն գտնել (մի տեղում լինել): «Աչքս մին էլ բաց եմ անում անմահական մի դրախտում» (ՀԹ):

9. Վերակենդանանալ: «... Եվ աղաչում էր նա մեռած որդուն՝ Մի անգամ խոսի, աչքը բաց անի» (ՀԹ):

² «Հայտնի է, որ բազմիմաստ բառերը իրենց զանազան իմաստներով համընկնելով այլ բառերի՝ դրանց հետ կազմում են հոմանիշներ» (տե՛ս Այ. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Բառագիտություն, Երևան, 1998): Այդպես էլ բազմիմաստ ԴՄ-ների մի մասը համանունության դեպքում նույնպես ունենում է հոմանիշային իմաստներ:

10. Բացվելի, ծաղկելի (բույս, ծաղիկ): «Նոր էր մանուշակը իր աչքը բացել»:

11. Մեկի միտքը բանալ, մեկին խելամուտ դարձնել: «Բավական է միամիտ մնաս, ես քո աչքերը պիտի բանամ, մի քիչ սթափ նայիր կյանքին» (ՀԱ):

Այդպես էլ՝ գլուխ դնել դարձվածը ժամանակակից հայերենում ունի ուճական մի քանի իմաստային կիրառություններ, որոնք դրականորեն գործածվելիս ունեն 8 իմաստ, իսկ ժխտականով՝ 2: Երեսից ընկնել ԴՄ-ն ունի 7 համանուն կիրառություն, երես զարձնելը՝ 6, իսկ ականջ դնել, գլուխ ունենալ, դուռը (դռները բախել), ձայն տալ, ձեռք տալ, քամուռ տալ, ջուր կտրել դարձվածները՝ 5-ական: Բազմաթիվ են նաև 4-ական ու 3-ական հոմանիշային իմաստներ ունեցող համանուն ԴՄ-ները, իսկ 2-ական իմաստ ունեցողների թիվը հարյուրների է հասնում³:

Բերենք ևս մի քանի հոմանիշային արժեք ունեցող ԴՄ-ների օրինակներ.

Անդանակ մոռթել— 1) Սաստիկ տանջել, շարշարել, 2) դժվար դրություն, կացություն մեջ դնել, 3) շխտելով ու լռելով ազդել մարդու վրա:

Ջրի երես դուրս գալ— 1) Բացահայտվել, հայտնի դառնալ, ի հայտ գալ, 2) մերկացվել, գաղտնիքը բացվելով՝ խայտառակվել:

Պոչ խաղացնել— 1) Շողոքորթել, քծնել, 2) խորամանկելով խուսանավել, 3) շեմուռում անելով գործը ձգձգել, 4) նազուտուզ անել:

Խոսքը կտուրը գցել— 1) Խոսակցության նյութը փոխել՝ նոր եկողից խուսափելու համար, 2) բուն հարցի մասին շխտելու համար կողմնակի բաներից խոսել, կողմնակի խոսակցություն մեջ գցել:

Գլխի տակ փափուկ բարձ դնել— 1) Խոստումներով, մեղմ խոսքերով մեկին հանգստացնել, 2) սուտ հույսերով խաբել, հույսեր ներշնչել, 3) վատ բաների, անթույլատրելի արարքների համար խրախուսել:

Գլխին քար գցել— 1) Որևէ բանի իրազործումը խանգարել, խափանել, խոչընդոտել, 2) մի բան անխնա վատնել, շռայլել, քոռուփուշ անել, շափսոսալ, 3) մեկին կամ իրեն դժբախտության, անախորժության մեջ գցել, պատուհասել և այլն:

ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅԱՆ: Բավականին մեծ թիվ են կազմում նաև այն համանուն բազմիմաստ դարձվածները, որոնք տարբեր խոսքաշարերում բոլորովին այլ, իրարից բավական հեռու իմաստներ են արտահայտում, դրանցում ոչ մի հոմանիշային իմաստ նույնիսկ հնարավոր չէ որոնել. այդպիսի ԴՄ-ների առկայությունը մտածելու շատ բան է տալիս, և դրանց ծագումնաբանական նմանությունը հետազոտողին անպայման տանում է ժողովրդի լեզվի ու պատմության խորքերը. այս դեպքում նույնիսկ դժվար է լինում ստուգաբանել այդ ԴՄ-ների՝ իրարից այդքան տարբեր իմաստներ ստանալը: Իհարկե, դրանց մեջ կան նաև այնպիսի կառույցներ, որոնց իմաստները կարելի է կապել մարդու, կենդանու վարքագծի, ֆիզիկական ու ֆիզիոլոգիական վիճակի, ինչպես նաև որևէ երևույթի, իրադարձության տարաբնույթ հատկանիշների հետ: Այսպես, օրինակ, անբարեհաջող, վատ մարդու՝ ինչ-որ գործի ընթացքում ներկա գտնվելը մարդիկ կապել են անհաջողության հետ և ստեղծել են ասելը ծանր դարձվածը (Շատ անհաջող ու նավաստ մարդ է ձեր Մարկոսը, երբ գործի ժամանակ երևում է, անպայման կամ գործիքս է կոտրվում, կամ մի վատ բան է լինում. ասելը շատ ծանր է, թող մեր կողմերում չերևա— ՍԽ): Նույն դարձվածով մարդիկ նշում

³ Հողովածում քերված, ինչպես նաև հարյուրավոր այլ բազմիմաստ դարձվածներ (իրենց ոճախմաստային կիրառություններով ու տեքստային օրինակներով) բերել ենք մեր կազմած «Դարձվածաբանական ուսումնական բառարանում», որը շուտով լույս կընծայի «Լույս» հրատարակչությունը:

են նակ հղի կնոջը, այս դեպքում արդեն նկատի ունենալով նրա ոչ արագաշարժ լինելը՝ ֆիզիոլոգիական պատճառով (Չնայած հարսի ոտքը ծանր է, բայց նա նորից նույն հոանդով շարունակում է տան հողար հողալ— ՊՊ):

Կամ քթի տակ դարձվածով ժողովուրդը մի դեպքում տարածությունը շատ մոտիկ լինելն է նշում (Տունդ քթիդ տակ է, բայց միշտ գործից ուշանում ես— ԲԽ), մյուս դեպքում՝ ժամանակի մոտիկ լինելը՝ (Ձմեռը այնքան էլ հեռու չէ՝ քթի տակ է, բայց դպրոցի կաթսայատունը դեռ պատրաստ չէ— Գպր.): Նույն դարձվածով նշվում է նակ ցածրաձայն երգելը, ծիծաղելը, խոսելը, նույնիսկ՝ մոթմոթալը՝ (Պալատականներն իրար աչքով արին ու ծիծաղեցին քթերի տակ— ՀԹ, նյուսալավուրդը ինչ-որ մոթմոթաց քթի տակ— ԴԴ: Տղան բարձրաձայն չէր խոսում, այլ քթի տակ ինչ-որ բաներ էր ասում— Գպր.):

Ձեռք ֆաշել-ը մի դեպքում հրաժարվել է նշանակում, մյուս դեպքում՝ ստորագրել:

Քարը ֆարի վրա չթողնել— 1) Ավերել, հիմնահատակ կործանել, քարուքանդ անել, հողին հավասարեցնել, 2) շատ խիստ քննադատել:

Բերանի ջուրը (ջրերը) զնալ դարձվածով մի դեպքում նշվում է սաստիկ սոված լինելու հանգամանք (... Նույնիսկ օրերով սոված էինք մնում, բերաններս ջրերը զնում էին— ԳՄ), մյուս դեպքում նշվում է մի բանի շատ համեղ լինելը (Մեր հարսնացուն այնպիսի խմորեղեն է պատրաստում, որ բերանիդ ջուրը զնում է— ԲԽ), երրորդ դեպքում էլ ասվում է մի բանի շատ հավանելիս (Եկեք ձեզ համար այնպիսի հոպակ պարեմ, որ բերաններիդ ջրերը զնա— Թարգմ.):

Աչի առաջ— 1) Մեկի հսկողության տակ (Երեխային աչիդ առաջ կուցնես, անուշադրության շատնես— Գար.): 2) Հիշողության մեջ (Սաքոյի աչի առաջ սպիտակ շորերով կինն էր— ՊՊ): 3) նկատի ունենալ, ականջի հետև չգցել (Կարեն, նկատի ունեցիր ցուցահանդեսը, աչի առաջ ունեցիր, նախապատրաստվիր— ԳԹ):

Բազմիմաստ համանուն ԴՄ-ների մեջ քիչ չեն նակ այնպիսիները, որտեղ նույն ԴՄ-ն մի քանի իմաստներով համանիշունություն է արտահայտում, իսկ մեկ կամ մի քանի կիրառություններով էլ՝ բոլորովին տարբեր իմաստներ: Այսպես՝ ականջը կախ դարձվածը քանի իմաստներով համանիշային կիրառություն ունի՞ 1) Հանգիստ, բնավորությամբ խաղաղ, 2) հնազանդ, 3) ուշադիր, զգոն, իսկ մյուս իմաստով գաղտնի խոսակցություններ լսելու հետամուտ նշանակությունն ունի (Կողակից հաճախ էին զգուշանում, գիտեին՝ ականջը կախ է— ԴԴ):

Գլխին զոռ տալ ԴՄ-ն երկու իմաստով համանիշ է՝ անմիտ բաներ խոսել և իր ուժերիդ վեր բաների մասին մտածել, իսկ երրորդ իմաստով նշանակում է՝ աշխատել մի բան հասկանալ, գլխի ընկնել, կռահել:

Դաս տալ նշանակում է՝ սովորեցնել, իր կենսափորձը հաղորդել, իսկ մի այլ դեպքում՝ պատժել (նակ ծեծելով):

Դուռը բախել (ծեծել)— Համանիշային իմաստով նշանակում է՝ որևէ խնդրանքով մեկին դիմել, նակ՝ մեկին անհանգստացնել, իսկ մի այլ դեպքում նշանակում է՝ ի տրիտուր իր արածի՝ պատասխան ստանալ (Այդպես է, որդի, դուռ ծեծողի դուռը կծեծվի, որ վատություն շաների, դեմդ չէր գա— ՍԳ):

Նույնը փարեղի է ասել խելի բերել դարձվածի մասին. համանիշային իմաստներով նշանակում է՝ սթափեցնել, ուշքի բերել, մեկ այլ իմաստով՝ զգաստացնել, մոլորությունից հետ պահել՝ հասկացնել, երրորդ իմաստով՝ պատժել, գլխին խաղ խաղալ և այլն:

ՀԱԿԱՆԻՇԱՅԻՆ ԲԱԶՄԻՄԱՍՈՒԹՅՈՒՆ: Բազմիմաստ համանուն ԳՄ-ների մեջ, թեև քիչ քանակությամբ, բայց կան նաև այնպիսիները, որոնք տարբեր խոսքաշարերում իրար հակադիր իմաստներ են արտահայտում. այսինքն՝ դրանք արտահայտության պլանում նույն, բովանդակության պլանում տարբեր կառույցներ են՝ հակաճիշտ անվանումով:

Քննարկենք այդպիսի ԳՄ-ներից մի քանիսը: Օրինակ, զին շունենալ բառակապակցությունը դարձվածային իմաստով գործածվելիս՝ մի դեպքում անարժեք, կամ շնչին արժեքի իմաստ ունի, մեկ այլ դեպքում, ուրիշ խոսքաշարում ու հանգամանքներում դրան բոլորովին հակառակ իմաստ է ձեռք բերում: Հմմտ. «Օ՛, մի արտասովոր, խորտակված մարդու արտասուքները այստեղ զին շունեն» (ՀԹ), «Ջուրը սարի տակին զին շունի, անարժեք է, իսկ սարի գլխին անզին է» (Ավ.):

Ձեռք մեկնել— մի դեպքում նշանակում է օգնել, նեղ վիճակից մեկին հանել. «Լավ մարդը նա է, ով նեղության օրերին ձեռք է մեկնում ընկերոջը» (ԳՄ): «Հիվանդին ձեռք մեկնելը ամեն մարդու տրված չէ» (ԲԽ): Մեկ ուրիշ դեպքում այդ նույն դարձվածք մուրալու, օգնություն խնդրելու, ողորմություն աղերսելու իմաստն ունի. «Ոմանք պարզապես կեր էին փնտրում կամ ձեռք մեկնում անցորդներին» (Գար.): «Ով չի նկատում, որ վերջին երկու տարում որոշ մտավորականներ, իրենց արժանապատվությունը մի կողմ դրած, ձեռք են մեկնում սրան-նրան» (Երկիր):

Ձեռք բռնել դարձվածք գրեթե նույն ոճա-գործառական իմաստն ունի. այն նույնպես նշանակում է օգնել— «Լավ ընկեր է Ավիկը՝ նեղ օրերիս միշտ ձեռք է բռնել» (Գպ.), և արգելել, թույլ չտալ որևէ բան անել. «Ոչ մեկը չեղավ, որ տնօրենի ձեռքը բռնեք ու ասեք, որ հիմնարկը քոնը չէ» (ՍՀ):

Խելիք գլխից գնալ դարձվածով ժողովուրդը մի դեպքում նշում է մարդու հիմարանալը, բանականությունից զրկվելը. «Տղադ սարսաղացել ա, Բադի ապեր, խելիք գլխից գնացել ա» (ԱԲ), մեկ ուրիշ դեպքում՝ անշափ ուրախանալը, զմայլվելը, սքանչանալը. «Վարդիթերը ձիու սանձից բռնած ընկել էր առաջ ու գնում էր... Տղան որ տեսավ, խելիք գլխից գնաց, այդպիսի աղջիկ նա դեռ չէր տեսել ոչ մի տեղ» (ՀԺՀ):

Վզին նստել— 1. Մեկի համար հոգս լինել, անաշխատ մեկի հաշվին ապրել. «Հիմա մեր երիտասարդներից շատերը ծնողների վզին են նստել ու շեն ուզում աշխատել» (Գար.): 2. Իրեն ենթարկել. «Կիևը որ ամուսնու վզին նստեց, ինչ ուզենա, անել կտա» (Ոզնի):

Վիզ առնել— 1. Խոստովանել, հանձն առնել մի բան կատարելու. «Վերջապես ընկերս վիզ առավ ծախսերի կեսը իր վրա վերցնել» (ԳԹ): 2. Խոստովանել, հանցանքն ընդունել. «... Աղջիկը վիզ առավ մատյան գողանալը» (ՍԴ):

Իրար հասնել— 1. Իրար վրա հարձակվել, ըմբշամարտել (Ու տաքանում են տղերքը սաստիկ... Իրար են հասնում թափով մոլեգին— ՀԹ): 2. Իրար օգնել, սատար կանգնել (Տատս միշտ խորհուրդ էր տալիս՝ Տղերք շան, դուք իրար հասե՛ք, իրար պաշտպանե՛ք, ձեզ հաղթող չի լինի— ՍԳ):

Նման հակիմաստ կիրառություններ ունեն նաև այնպիսի համանուն ԳՄ-ներ, որոնք մի ծայրով էլ արհամարհանք, հեզանք են արտահայտում: Այսպես՝

Անմեղ գառ— նշանակում է 1. խելոք, համեստ, հնազանդ. «Այդ խեղճ տղան ի՞նչ էր արել, որ ուսումնարանից վտարեցին, մի անմեղ գառ էր» (ՊՂ): 2. Հեզանական, բացասական իմաստ ունի. «Շատ ես անմեղ ձկանում, բեզ անմեղ գառան տեղ ես դրել: ... Այնպես ես խոսում, կարծես անմեղ գառ լինես» (ՎԲ):

Աչֆո լույս— 1. Բարեմաղթութուն, որ ասվում է ուրախ լուր հաղորդելիս. «Աչֆո լույս, Շուշին ազատագրվեց... Աչֆներս լույս, շուտով գինադադար է կնքվելու» (ԲԽ): 2. Հեզնական արտահայտություն, որ ասվում է ոչ հաճելի առիթով. «... Աչֆո լույս, նորից այն շահախարդախին մեզ մոտ են ուղարկում» (ԾԾ):

Խելֆի ծով դարձվածք ևս մի կիրառություն խելոք է նշանակում, մեծ գիտելիքների տեր. «Գեռևս դպրոցական տարիներին ուսուցիչները Ս. Մերգելյանին խելֆի ծով էին անվանում» (Գար.): Մեկ այլ կիրառություն այն արհամարհանք է նշանակում մարդու նկատմամբ՝ շեշտելով նրա հիմար, անխելք լինելը. «Խելֆի ծով ջանիդ մեռնեմ, նազար ջան» (ՀԺՀ):

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՀԵՏ ԿԱՊՎԱՍ ԲԱԶՄԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ, Դարձվածային բազմիմաստության մեջ մենք դարձվածային համանուններ ենք դիտում նաև միևնույն կառույցի անհոդ (կյանք տալ— կենդանություն պարզեցվել, ծնել, աշխարհ բերել) և հոդով (կյանք տալ— մեռնել, կյանքը զոհաբերել որևէ բանի կամ որևէ մեկի համար) ոճական կիրառությունները, որոնք բոլորովին տարբեր, ավելի հաճախ՝ հակադիր իմաստներ են արտահայտում:

Ա. ՈՐՈՇԻՉ և ՈՂԵՐ և դարձվածք.— Ինչպես իրավացիորեն նըշում է ակադեմիկոս Գ. Զահուկյանը, «Ժամանակակից հայերենի երկու որոշիչ հոդերը՝ ր-ն և և-ն, որոշյալության իմաստի արտահայտության տեսակետից հանդես են գալիս որպես միևնույն անփոփոխակի դիրքային տարբերակներ»⁴: Ճիշտ է, այստեղ Զահուկյանը այդ հոդերի՝ ԴՄ-ներին իմաստազատիչ դեր հաղորդելը չի նկատել, սակայն դա ակնհայտ է մի շարք դարձվածների՝ տարբեր խոսքաշարերում աճորոշ և որոշյալ առումներով հանդես գալու դեպքում: Քննարկենք դրանցից մի քանիսը:

Աճորոշ

Աճուն հանել— բարի անուն, համբավ ձեռք բերել (Տեսա՞ք իմ Վահանը քաղաքում ինչ աճուն հանեց, ինչ պատիվ ձեռք բերեց— ԳԹ):

Աչֆ առնել— շարակնել (Տատիկս ասում էր, որ երեխան աչֆ է առնել, պետք է անպայման աղոթել— ՍԽ): Հոգի տալ— սաստիկ փափագել, պատրաստ լինել կյանքը տալու մի բանի համար (... Փողի համար հոգի էր տալիս— ՍԶ):

Սիրտ առնել— քաջալերվել, վախի զգացումը կորցնել (Ավատրիացիս կոացավ, շուր հանեց ու տարավ: էդ որ մերոնք տեսան, սիրտ առան— ՍԶ):

Գլուխ պահել— շաշխատել, ծուլություն անել, թաքստոցներ մտնել (— Չեղավ, տղաներ, շատ եք գլուխ պահում, գործը տեղից չի շարժվում,

Որոշյալ

Աճունը հանել— վարկաբեկել, վատահամբավ դառնալ (Ո՞վ է մեղավոր, ինքն է իր աճունը հանել, վարկաբեկվել— ՍԳ):

Աչֆը առնել— նկատել, տեսնել (Մեկ էլ աչֆը առավ ծառի տակ անձրևանոցով սպասող տղային... — ՊՂ): Հոգին տալ— մեռնել, շունչը փչել (Քիչ էր մնում տեղն ու տեղը ընկնեք, հոգին տար— ՀԹ):

Սիրտը առնել— ամոքել, սիրաշահել (Աշխատի՞ր՝ մայրիկիդ ամոքել, սիրտը առնել. շատ է վշտացել— ՍԴ):

Գլուխը պահել— մի կերպ ապրել, յուր գնալ, գոյությունը քարշ տալ (Խեղճ մարդը հազիվ էր օրվա հացը հայթայթում ու գլուխը պահում, երբ

⁴ Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեղաբանական հիմունքները, Երևան, 1974, էջ 210:

— գայրացավ պետը— Ավ.):

Հաց կտրել— բարեկամութիւն հաստատել, ընկերանալ (ժամանակին իրար հետ հաց էին կտրել, հո նրա անունը չէր տա— ՎԲ):

Ձեռք բռնել— օգնել, օժանդակել, նեղութիւնից հանել (Օհաննես, ձեռք բռնիր, տղայիս ամուսնացնեմ, հոգըս ավելանա— ՊՊ):

Ակնհայտ է անորոշ-որոշալ հակադրութեան իմաստային բացահայտ տարբերութիւնն ու հողի իմաստազատիչ դերը:

Որոշ կայուն բառակապակցութիւններում էլ միևնույն կառուցը անհոդ գործածվելիս դարձվածային իմաստով է հանդես գալիս, իսկ հոդով գործածվելիս՝ սովորական: Բերենք դրանցից մի քանիսը՝

Գլուխ հանել— հասկանալ, մի բան կարգի գցել (Ծս այս մեքենայից գլուխ շեմ հանում— ԲԽ):

Ականջ ծակել— ականջի, լսելու համար տհաճ լինել (Քո նվագը ականջ է ծակում, սխալ ես նվագում):

Երես դարձնել— բարեկամութիւնը խզել, այլևս բանի տեղ չդնել (Նա վաղուց է երես դարձրել եղբորից— ԲԽ):

Ձեռք փաշել— մի բանից, մեկից հըրաժարվել, նաև՝ ստորագրել (Բարեկամ, ձեռք փաշիր այդ «բարեբարից»— Երկիր):

Գլուխ բարձրացնել— ըմբոստանալ, դեմ դուրս գալ (Գլուխ կբարձրացնի ուսմիկը... ԴԴ):

Նկատելի է նաև այս իրողութեան հակառակ երևույթը, երբ միայն որոշիչ հոդերի շնորհիվ է սովորական հարադրութիւնը կամ բառակապակցութիւնը վերաիմաստավորվում և ձեռք բերում դարձվածի իմաստ: Ահա մի քանի օրինակ՝

Ճաշ եփել— սովորական, իսկական իմաստով:

Դաս տալ— սովորական իմաստով՝ դասավանդել:

Հաց ուտել— սովորական իմաստով, նաև՝ ճաշել:

Բուռը զգել— սովորական իմաստով՝ սանդեղքով զգել:

Ձայն տալ— սովորական՝ ձայնել:

նոր «բարեկամներ» հայտնվեցին— Ողնի):

Հացը կտրել— ապրուստից զրկել, գործից ազատել (... Չնչին բանի համար չի կարելի մարդու հացը կտրել... ՍՀ):

Ձեռք բռնել— արգելել, թույլ չտալ վատ արարք գործել, վատ բանից ետ պահել (— Երբ զգացիր, որ նա այդ քայլին է դիմելու, ինչու՞ ձեռքը չբռնեցիր— ԲԽ):

Գլուխը հանել— սովորական (գլուխը թաքստոցից հանել):

Ականջը ծակել— սովորական (երեխայի ականջը ասեղով ծակել):

Երեսը դարձնել— երեսը շուռ տալ, շրջվել (Միրոն երեսը դարձրեց ու մտքերի ծովն ընկավ— ՄԳ):

Ձեռք փաշել— ձեռքը մի բանի վերայից վերցնել, հեռացնել (Հայրս ձեռք փաշում է տաք վառարանից— ՄԳ):

Գլուխը բարձրացնել— գլուխը բարձից, դրած տեղից բարձրացնել և այլն:

Ճաշը եփել— մեկի դատաստանը տեսնել, պատժել:

Դասը տալ— խրատել, պատժել նաև՝ սովորեցնել, դաստիարակել:

Հացը ուտել— պատժվել, տուժել կամ վատ բախտի արժանանալ:

Բուռը զգել— մեկին խիստ քննադատել, վնասել, ծեծել, տուժեցնել:

Ձայնը տալ— մեկի օգտին քվեարկել:

Հաճախ էլ որոշիչ հոդի իմաստազատիչ դերը պայմանավորված է լինում միայն խոսքաշարով. միևնույն հարադրությունը կամ բառակապակցությունը տարբեր խոսքային միջավայրում տարբեր իմաստներ է ստանում՝ մի դեպքում ունենալով սովորական, մյուս դեպքում՝ դարձվածային արժեք:

Համեմատենք հետևյալ կապակցությունների տարբեր խոսքային միջավայրերում

Կապակցություն	Իսկական իմաստով	Դարձվածային իմաստով
Ջուրն ընկնել	Հանկարծ նավակը թեքվեց, և աղ- ջիկը ջուրն ընկավ (Թարգմ.):	Խեղճ մարդու ամբողջ տար- վա աշխատանքը ջուրն ընկավ (ՍԳ):
Հաշիվը մաքրել	Արագ հաշիվը մաքրելու համար ես մոտեցա մատուցողին (Գար.):	Հաշիվը մաքրելու համար ըն- կերոջը քաղաքից դուրս էր տա- րել (ՎԲ):
Թուրք քաշել	Կարմիր ձիւն թուրք քաշեց ու գետ- վեց դեպի քուտակը (ՀՄ):	Չես կարո՞ղ էր երես առածի թուրք քաշել (ՆԶ):
Կապը կտրել	Թն ինչպես էր ձիւն կապը կտրել ու գնացել, ոչ ոք չիմացավ (ՀՋ):	Ասում են՝ կնիկը կապը կտր- ել է, Արջանց Ասլաճի հետ ըն- կել (ՄՆ):

Նույն երևույթը նկատելի է նաև կառույցների անհոդ գործածության (հո-
դերի շեղոքացման) դեպքում՝ նորից կապված խոսքաշարի հետ: Օրինակ, **փա-
ր** կտրել հարադրությունը մի խոսքաշարում գործածվում է իր իսկական իմաս-
տով (Հայրս քարհանքներում փառ էր կտրում— ՊՂ), մի այլ դեպքում՝ դարձ-
վածային (Որսորդը զարմանքից փառ կտրեց... (ՎԱ): Առաջ փաշել— 1. ինչ-
որ բան տեղից քաշելով մոտեցնել, 2. ուշադրության արժանացնել, նաև՝
պաշտոն տալ: Դաս տալ-ը մի դեպքում սովորական իմաստով է կիրառվում
(ինչպես վերևում՝ դասավանդել), ուրիշ դեպքում՝ վերաիմաստավորված (Շախ-
մատը շարի՛ր, շարի՛ր, քեզ մի լավ դաս տամ— ԲԽ): Եվ այսպես, կարելի է
բազմաթիվ օրինակներ բերել:

Բ. Ս տ ա ց ա կ ա ն և դ ի մ ո ռ ո շ ճ ո դ ե ռ և դ ա Ր ձ վ ա ծ ր.— Դարձ-
վածային բազմիմաստության մեջ հետաքրքրական կիրառություններ ունեն
նաև միևնույն կառույցի ս, դ (ը, ն) հոդերով կապակցությունները, որոնք
տարբեր խոսքաշարերում տարբեր իմաստներ են արտահայտում՝ հանդեպ
բերելով դիմային առման հատկանիշներ:

Այսպես՝ **հոգին** ուտել դարձվածը բայի սահմանականի անցյալ կատար-
յալի առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի հետ գործածվելիս՝ **հոգին** կերա
(կերառ, կերավ) նշանակում է շարձարել, նեղություն տալ, նույն իմաստն
ունի նաև ս և դ հոդերով կիրառվելիս՝ **հոգիս** կերառ (կերավ), **հոգիդ** կերառ
(կերավ) կիրառություններում: Նույն գոյականը՝ դ, ն հոդերով բայի ըղձական
եղանակի հետ գործածվելիս, կառույցը այլ իմաստ է ստանում՝ սիրալիրու-
թյան, փառաբանության (հոգիդ ուտեմ, հոգին ուտեմ): Հետաքրքիր է, որ ս
հոդով այդ իմաստով կիրառություն չկա, և բայն էլ միայն ըղձականի առա-
ջին դեմքով է լինում:

Ձեռքս կկտրեմ դարձվածն էլ ձևավորվում է միայն ս հոդով և կիրառվում
է երկու իմաստով՝ 1. նշանակում է բացարձակապես հրաժարվում եմ իմ ձեռ-
քով մի բան անելուց (Ձեռքս կկտրեմ, այդ հիմարի դիմումը շեմ մակագրի—
Գար.), 2. երդման արտահայտություն՝ ասածը հաստատելու համար (Ձեռքս
կկտրեմ, եթե գրածիս մեջ որևէ շեղում լինի բնագրից,— երդվեց քարտուղա-
րուհին— ՎԲ):

Չարք տանել դարձվածը՝ գոյականը դ հոդով, բայը՝ ըղձականի եզակի
առաջին դեմքով, սիրալիրության իմաստ է արտահայտում՝ շարք տանեմ,
իսկ նույն գոյականը նույն հոդով սահմանականի անցյալ կատարյալի եզակի

երրորդ դեմքի հետ մեռնել է նշանակում (Ավոն շարդ տարավ, գնաց հասավ հազար տարվա մեռելներին— Կումայրի):

Վրաս գրի ժողովրդախոսակցական ոճերում (հատկապես երկխոսություններում) կիրառվող դարձվածք միայն այս ձևավորվածությունն ունի և հիմնականում երկու իմաստով է գործածվում՝ 1. Մի հավատա. ինչ որ ասում են, գլուխ չի գալու (Ասում են՝ այս տարի մեր պուրակում շատրվաններ են տեղադրելու: — Վրաս գրի, այս երկու տարի է ասում են, ասում, բայց գործ անող չկա— Ծծ): 2. Տվածդ ետ չես ստանա. հույսդ կտրիր (— Լսիր, էն հիմար բնկերդ կարճ ժամկետով ինձանից փող է վերցրել, բայց եղավ երկու ամիս, չի վերադարձրել: — Վրաս գրի, դու առաջինը չես— Բե):

Ս և Գ հոգերով ձևավորվելիս դարձվածները տարբեր իմաստներ են ըստանում նաև հետևյալ դեպքերում՝

ա) առաջին դեմքի հոգի առկայությամբ՝ ս-ով ձևավորվելիս, կապակցությունը մեծ մասամբ ակոսանքի իմաստ է արտահայտում (աչխ դուրս գա, լույսս խավարի, մագս կտրվի), իսկ երկրորդ դեմքի ցուցիչով՝ դ հոգով ձևավորվելիս, միևնույն կառույցները անեծքի արտահայտություն են դառնում (աչիդ դուրս գա, արեդ խավարի, մագդ կտրվի) և այլն:

բ) ս-ով գործածվելիս կառույցը նաև երդման իմաստ է ստանում (արևս մեռնի, գլուխս մեռնի, աչխ բռնի), նույն կառույցը դ-ով՝ նորից անեծքի իմաստ է ձեռք բերում (արեդ մեռնի, գլուխդ մեռնի, աչիդ բռնի) և այլն:

Որոշ կառույցներում էլ ս, դ, բ (ն) հակադրությունները չեզոքանում են, տարբերությունները լինում են միայն դիմային. օրինակ՝ բանս, բանդ, բանը բուրդ է: Խոփս, խոփդ, խոփը ֆարին դեմ առավ: Խանչալիս, խանչալիդ, խանչալի ֆարը չի բնկնի: Ավել բողոմը աչխ (աչիդ, աչիբ) չի հանի և այլն:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ, Բազմիմաստ համանուն ԳՄ-ները մեկ այլ հետաքրքիր կիրառություն ևս ունեն, դա նրանց քերականական համանունությունն է. այսինքն՝ նայած համատեքստին ու կիրառությանը, միևնույն դարձվածք կարող է մի դեպքում մի խոսքի մասի պատկանել, մեկ այլ դեպքում՝ ուրիշ: Օրինակ, աստծու կրակ դարձվածք մի խոսքաշարում գոյական է և նշանակում է աղետ, փորձանք (Թե ինչ աստծու կրակ էր, որ թափվեց մեր գլխին, մենակ մենք զգացինք— Կումայրի), մի այլ խոսքաշարում այդ նույն դարձվածք անակն է և նշանակում է ժիր, ճարպիկ, շարանճի, նաև՝ անգութ, դաժան (Մի աստծու կրակ երեխա է թռնիկս՝ բոլորիս խառնում է իրար: Մի աստծու կրակ կառավարիչ ունեինք, որ երևում էր, տեղ-նուտեղը շորանում էինք— ԳՄ):

Աչխով-ունեով— 1. անակն— շատ գեղեցիկ, վայելչատեսք (Մի շնաշխարհիկ աղջիկ էր՝ աչխով-ունեով, բոյով-բուսաթով— ԳԹ): 2. մակբայ (Ընկերս անընդհատ աչխով-ունեով հասկացնում էր, որ խաղաքարտերը շատ չբանամ— ՎԲ):

Չոր գլուխ— 1. գոյական (ինքն է, իր չոր գլուխը. ոչ ոք չունի— Կումայրի): 2. անակն— (Շատ չոր գլուխ մարդ է՝ խիստ իրասածի— Ծծ): 3. մակբայ— (Խեղճ մարդը այդպես էլ ամբողջ կյանքում չոր գլուխ մնաց— ՄԳ):

Աղ ու հացով— 1. անակն (Թումանյանի հայրը աղ ու հացով մարդ էր— Դաս.): 2. մակբայ (Ամենուրեք Անդրանիկին դիմավորում էին աղ ու հացով— Ավ.):

Ձեռնով-առնով— 1. անակն (Մեր Օնեսը հլա որ ձեռնով-առնով մարդ է՝ իր տանն ու տեղին— Կումայրի): 2. մակբայ (Ձեռնով-առնով մի կերպ հասկացրի, որ երկաթուղային կայարանի տեղն եմ ուզում իմանալ— Գար.):

Ահա հիմնականում սրանք են բազմիմաստ դարձվածների իմաստային

ու ոճական բազմազան կիրառությունները, որոնք արտահայտության պլանում նույնն են (կամ գրեթե նույնը), իսկ բովանդակության պլանում՝ համանիշ, հոմանիշ և հականիշ:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ.— Ակեղ Բակունց	ՀՄ.— Հրանտ Մաթևոսյան
Ավ.— Ավանգարդ, լրագիր	ՀԺՀ.— Հայ ժողովրդական հեքիաթներ
Ավ. Իս.— Ավետիք Իսահակյան	ՀՔ.— Հրայր Բուշար
ԲԽ.— Բանավոր խոսակցություն	ՄԳ.— Մուշեղ Գալշոյան
Գաթ.— Գարուն, հանդես	ՆՋ.— Նաիրի Ջարյան
ԳԹ.— Գրական թերթ, լրագիր	Ոզնի— Երգիծական հանդես
ԳՄ.— Գուրգեն Մահարի	ՍԳ.— Սովետական գրակ. հանդես
Դաս.— Դասագիրք	ՍԴ.— Սովետական դպրոց, լրագիր
ԴԴ.— Դերեմիկ Դեմիրճյան	ՍՋ.— Ստեփան Ջորյան
Դպ.— Դպրություն, լրագիր	ՄԽ.— Մերո Խանգաղյան
Երկիր— լրագիր	ՍՀ.— Սովետական Հայաստան, լրագիր
Թարգմ.— Թարգմանություն	ՎԱ.— Վախթանգ Աճառյան
Կումայրի— Գյումրիի օրաթերթ	ՎԲ.— Վիկտոր Բալայան
ՀԹ.— Հովհաննես Թումանյան	

Х. Г. БАТИКЯН — Фразеологическая многозначность. — Подобно словам, фразеологизмы имеют свою внешнюю и внутреннюю стороны, бывают однозначными и многозначными. В статье обстоятельно исследуются взаимоотношения планов выражения и содержания многозначных фразеологизмов, даются их смысло-стилистические синонимические, антонимические варианты. Особое внимание уделяется значению артиклей и их смыслоопределяющей роли.